

բարով վայելել տացէ . ամէն : Բայց գրեցաւ սա ի թղին Հայոց (Չգ | ին տողին վրայ գրուած եւ ջնջուած) քառիցս (ի լուս. չորիցս) յիննակի եւ Գ յորելինի, այլ եւ էրդի աւելորդի, Օգոստոսի ԺԼի, ի տիրախնամ եւ աստուածապահ մայրաքաղաքս Լէվ կոչեցեալ, ի դուռն Ննջման սուրբ Աստուածածնի, ձեռամբ մեղսամած եւ փծուն գրչի, Սիմէոն զպրի Զամոսցացո : Զոր երես անկեալ աղաչեմ զհանդիպողսդ, յիշել ի Տէր բարի մտօք, զվերոյսացեալ ստացող սորին զտէր Յովանէսն եւ զիւր ծնօղսն, եւ զիս անարժան գրօղս . եւ որք զմեզ յիշեն, յիշեալ լիցին յաւուրն ասեղին . ամէն» :

Վիեննա, Մխիթ. Մատ. Թ. 96, Թղ. 171բ—172ա. տե՛ս Տաշեան՝ Յուլյակ, էջ 365—366 : Նոյնը Ալիշան, Կամենից, 174 :

6. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԼՈՒԾՄԱՆՅ ԱՌ ՈՐՍ ԳՐՈՅ (1619)

«Արդ գրեցաւ գիրս որ կոչի Լուծմունք սրբոյն Գրիգորի Աստուածաբանի Առ որս ասացեալ գրոյս, լաւ եւ ընտիր օրինակէ, ի վայելումն բանասիրի տէր Յովհաննէս ասացեալ քահանայի որ մականուամբ կոչի Քարմատանենց, որ բազում ըղձիւ ետ գրել . զոր տէր Աստուած բարով վայելել տացէ . ամէն : Թղ. ՌԿԸ . յիշեսջիք զՍիմէոն զպրի Զամոսցացի» :

Չեռ. էջմ. 100, Թղ. 131բ :